ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ · ԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՓԱԿԱՆ ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար տարեկան 4 տոլար թղթով։
Եւրոպաի և այլ տեղերի համար տարկ. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիրները կանխիկ կը վճարուին։ Վերամակայ կամ ետամակայ բաժնորդութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բաժնէգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2 էն մինչև 4 վերջ։

Բ ՏԱՐԻ ԹԻՒ 59

1887 ՄԱՐՏ 16

ՄԱՐՏ 4 (Հ· Տ·)

ՕՐԱԲԱՁԱԳՐՈՒԹԻՒՆ

Կը հրատարակուի Դշ. և Երք. օրեր

ՊԱՏՇԱՃԱՆՆԵՐ

Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ· 1 պվատգիրը 2 սանտիմ։
Նամակ կամ ծրար պէտք է դրկել խմբագրութեան հետևեալ հասցէով· M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Réduction (Rue Vacon, 50)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ· — «Հայաստանի Զաւակների Միութիւն» ·—Հայաստան եւ Հայեր.—Վարդանանց հանդէսն Յնստրօ-Հունգարիա.—Նամակ Եգիպտահայ (Գահիրէ.)·—Իտալական ձգտումներն էրզրումի մէջ.—«Արմենիա»ին նպաստ.—Արտասահմանի լուրեր. Առեւտրական.—Յանուցումներ·—Բանասիրական (Հայգոյժ)։

ԱԶԴ

Թէեւ «Արմենիա»ի բաժնորդագրութեան պայմանն է ԿԱՆԽԻԿ վճարել, գոնէ եռամսեակ եռամսեակ, բայց մեր բաժնորդներուն մէջ շատեր կան որ կամ անփութութենամբ և կամ չկրնալով թէ իրենց բաժնորդագրութեան պայմանաժամը լրացած է արդէն, մինչեւ այժմ գոհ չեն վճարած իրենց բաժնորդագինն։ Սակայն այս բնթացք շատ գժտութիւններ կը պատճառէ մեզ որոնք վնասը ի շահ կարող է ըմբռնել ամեն մարդ երբ մտածէ թէ Ֆրանսայի մէջ հայերէն թերթի հրատարակելը որչափ ծանր մի ձեռնարկ է, մանաւանդ երբ մի անհատ է այդ ձեռնարկ գլուխ տանողն և ոչ թէ մի ընկերութիւն. նա իւր օրէ պիտի գոնէ իւր բաժնորդներուն ձեռնտուութեան մէջ։ Մենք կը հաշուենք թէ 600ի մօտ բաժնորդ ունինք և ըստ այնմ ծախքեր կանենք. բայց ինչ կը լինի լրագրին վճռակը երբ իսկապէս 350ի չափ վճարող բաժնորդ եղած լինի մինչդեռ մեր ամենէլիք բոլոր ծախքերը կանխիկ վճարումներով կը լինին։

Ուստի մեր չնորհակալութիւն յայտնելով այն բաժնորդներուն որոնք իրենց կանխիկ վճարումով քաջալերած են մեզ, կը խնդրենք դեռ չը վճարած բաժնորդներէն եւս որ բարեհաճին, բայի իրենց արդէն ատացածները վճարելէ, գոնէ 3 ամիս ալ կանխավճար անել որովհետեւ 1887 մայիս մեկէն սկսած, ՍԱՌԱՆՑ ԲԱՑԱՌՈՒԹԵԱՆ, այլեւս թերթի չպիտի ղրկենք անոնց որոնք գոնէ 3 ամսական բաժնորդագինը 5 Ֆրանք ԿԱՆԽԻԿ չեն ղրկած մեզ։

Այսօր ղրկեցինք Եգիպտոսի և Ռումանիոյ մէջ մեր ունեցած բոլոր բաժնորդներուն մեկ մեկ ծանուցագիր որով յայտնած ենք թէ ե՛րբ սկսած է իրենց բաժնորդագրութիւն եւ ե՛րբ կը լրանայ որպէս զի եթէ անոնց ճաշակած չէ բաժնորդագինը, փութան վճարել, մայիս 1 էն «Արմենիա»ի ղրկուելը յապաղումներուն չենթարկուելու համար։ Նոյնը պիտի ընենք հետզհետէ նաեւ ամեն տեղի բաժնորդներուն համար, որովհետեւ, եթէ այս կամ այն տեղէ նպաստներ հասած չլինէին ցարդ «Արմենիա»ին, համագրութիւնս մի ատելի դժուար կացութեան մէջ կ'ինկած պիտի գրանեւէր այժմ զոյն չարաւնակելու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՒԱԿՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

Միութեան կեդրոնական վարչութիւնը կազմուած է ի Մարսէլ ուր կը գտնուի նաեւ Հիմնագիրը անդամ ընտրուած Տեառնը։ Վարչական ժողովը որ Տեառնէն խորհրդակից և գործակից մարմինն է ըստ կանոնադրին, կը բաղկանայ հետեւեալ Մեծապատիւ Պարոններէն·

Գանձապահ — Կոստանդին Ծովհաննեան
Տեղեկագիր — Սահակ Շնորհալեան
Քարտուղար — Կ. Պարոյր

Նպատակաւոր վարչութիւնը քիչ օրէն կարգադրութիւններ կընէ յարաբերութեան սկսելու համար Միութեան անդամներուն հետ և ընդհանուր աշխատելու համար Միութեան նպատակին գործադրութեանը։

Գաղափար ենք թէ Հայ ժողովուրդը ուր որ ալ գտնուի, ուրախութեամբ իւր ձեռք պիտի տայ այս Միութեան և Օժանդակ ժողովներ կազմելով պիտի զօրացնէ Միութիւնը որի նպատակը՝ այն է «Օժանդակել Հայաստանի մտաւորական, բարոյական և նիւթական զարգացմանը», այնէն Հայի սրտին մօտիկ պէտք է լինի

անշուշտ։ Վարչութիւնը քիչ օրէն առանձին տետրակով պիտի տպագրէ Միութեան կանոնագիրը ցանկացողներուն ղրկելու համար։

Շատոնց իվեր ամէն կողմէ կը լսէինք, սա վախաք որ երանի՛ թէ Հայերը իրենց մէջ մի ընդհանրական միութիւն կազմէին ազգասիրական նպատակով։ Ահա «Հայաստանի Զաւակների Միութիւն»ը կը ներկայացնէ մի այնպիսի նպատակէտ՝ հաստատած մի այնպիսի հողի վրայ ուր կրնան միանալ զանազան գոյներով ազգասէրները, ամենէն գեղնած գունովէն մինչեւ ամենէն կարմիրները (ի բաց առեալ ի հարկէ միայն անոնք որոց բերանը կը խօսի, բայց սիրտը չզգար)։ վասն զի թէ՛ յեղափոխական լինի, թէ՛ մեծ պետութիւններուն միայն գլխակալ ազատութիւն յուսացող լինի, թէ՛ մեր վրայ տիրող տէրութիւններուն համակրութեան տակ հանդարտ միտքով ազատելու կուսակից լինի, վերջապէս ուրէ գտնուիլ մի Հայ որ կը սիրէ իւր ազգ և հայրենիք, չէ կարող ըսել թէ պէտք չէ օգնել Հայաստանի մէջ գանուող մեր գժբաղդ եղբայրներուն նիւթապէս, բարոյապէս և մտաւորապէս զարգացմանը։ Այս ոչ թէ մի չնորհ է այլ պարտաւորութիւն ամեն մի Հայի համար. և ամէն որ ազգային զգացում ունի,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԳՈՅԺ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ

Գրեց եւ պիտարհագուժեց

ԾՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(Շար· 58րդ բուհն)

Եւ ոմք էին Փիւրտերու անկարդ հրամաներուն վարիչ և առաջնորդ·— նոցա մոլեկրօն դէնպետներն էին, որոց ոգիներ իրենէ անտի ոմսութեամբ լեցուած կը պայթանային Հայոց ժողովրդին դէմ, մանաւանդ երբ կը լսէին և հաւատային իսկ՝ թէ այս պատերազմը յանուն քրիստոնէից աղատութեանը կը մղէ հիւսիսային պետութիւնն։

Ես գիտեմ ու կը ճանաչեմ զՓիւրտան. գիտեմ թէ նա ինքնին ոչինչ գործ և զօրութիւն չունի. այդ անդէպ պատճառանքներն ի բաց թողունք։ Այո՛, դէնպետներու կրօնամոլութեան հուրը կը վառէր

զերինք, այլ ի՞նչ հուր էր այն որ ի ներքուստ զդէնպետներ կը վառէր։

Ո՜հ, մի՛ կրկտեր այդ հուրը, գրի՛չ իմ, գրի՛չ իմ· կը բորբոքի և գքեզ կայրէ։ — Թո՛ղ այրէ, թող այրէ՛, և ամէնուն երթայ խառնի Հայոց ժողովուրդի այրած ամէնուն հետ։ Տէրութիւն զՓիւրտան ի զէն կը կոչէ, և ո՞վ իրաւունք ունի մեղադրել զինքն, զի Փիւրտան իւր դաւանակից ժողովուրդն է, առանց դրի և Գուրանի, և քան զՀայն բիւր անգամ յարդի։

Այլ մինչ դինուորն անթոշակ կը գինուորի՞. Փիւրտին հաց ու թոշակն ի՞նչ էր գինուորող ձեռքէն· — ոչինչ, այլ միայն այս բան· «Գնացէք և ձեր թոշակն ու հացը ձեր ձեռքով հոգացէք»։ Եւ ուստի՞·— Հայոց գեղերէն ու ժողովուրդէն։ Այս անարդար դատաստանին առաջ Փիւրտ կարդարանայ Աւետարանի և Գուրանի առաջ, և ես նմա իրաւունք կը տայի, եթէ Փիւրտան միայն իւր պէտքերը հոգար, հիւրարար վարուէր, գիւղացւոց հացն ուտէր, թէ հեծեալ էր՝ ձիոյ դարման խնդրէր, եղներ և ուղղակի բանակն երթայր։ Փիւրտան այսպէս չվարուեցաւ, և այնպիսի սոսկալի խժդժութիւններ գործեց նա որ աշխարհի պատմութեան մէջ ոչ գրիչ գրեց, ոչ բերան խօսեց և ոչ մարդոյ ականջը լսեց։

Կասեն թէ՝ Լէնկթէմուրը Հայոց աշխարհը արիւնով լուաց. լաւագոյն էր թէ Փիւրդն եւս արիւնով լուանայր։ Կասեն թէ՝ բռնաւորն Ափսալան մի անօրինակ վրէժխնդրութիւն մտաբերելով, Անիի մէջ արեան աւազան մի կազմեց, Հայոց ջերմարիւն երիտասարդները ոչխարի նման մորթելով լցոյց զայն ու նորա մէջ մտաւ ինչպէս ի լոգարան և այնպէս չվնասեց իւր սրտին զայրոյթը։ Երանի՛ թէ Փիւրտն եւս իրրեւ արիւնախանձ ինձ՝ արիւնով միայն չառանայր։ Կասեն թէ՝ խորամանկ Շահարան մինչ ի գերութիւն կը վարէր Այրարատայ աշխարհի որդիները, տաններու հազար հոգի Երասխին մէջ թափեց։ Հազա՞ր անգամ երանի թէ Փիւրդն եւս այդպէս գործէր։ Հայոց կիներն և կոյսերը նոյն Երասխայ ծոցին մէջ թափուէին, ալիքն առնէր տաներ և ծածկէր նոցա առականքը։

Դատե՛ք Հայոց, բի՛ր երանի կը տայի ձեզ, եթէ նոր Շահարաս մի գար զձեզ ի գերութիւն վարէր, և դուք երթայիք միահամուռ և կամակար թափուէիք Երասխայ գետին մէջ, գետն զձեզ գլորէր տաներ ի Կասպիական ծովը՝ ծովն ձեզ գերեզման լինէր, իւր անդունդին մէջ ծածկէր ձեր մերկութիւնը, քան թէ կուսական արեան մէջ թաթախելով նչաւակէր զձեզ վատչուէր Փիւրտին վայրագութիւնն։

Հայոց լերանց մոերի՛մ երկվայրիք, և դուք իսկ վայրենի գազանները, բացէ՛ք ձեր որջեր, ցոյց տուէք ձեր մութ խորշերը, հիւրասիրեցէ՛ք Հայոց փախուցեալ կիներ և կոյսերը որ մարդակերպ գազաններէն փախչելով ձեր գթութեան կ'ապաստանին։

Ո՛վ հալածեալ գայլեր, դուք արդար էք, դուք իրաւունք ունիք երբ սովալլուկ քաղցէն ստիպեալ հազիւ ահ ու դողով կը համարձակիք հովուի հօտէն գաղտագողի մի ոչխար յափշտակել. երէ՛ք այժմիկ և լեռներէն դիտեցէ՛ք թէ ի՞նչ կը գործեն ձեր դրացի մարդագէները· Թո՛ղ գգեղացւոց ոչխարներ, նոցա սիրելի ընտանիք և զաւակներն եւս յափշտակեցին և սրաժանիքներով պատառեցին և կերան Հայոց գեղջկի կոյսերը։

պէտք չէ որ խուսափի այդ պատասխանութիւնն կատարելէ։ Օ՛ն ուրեմն, խօսքին հետ և գործ։

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ. — Մեծ. Գ. Սահեան Շնորհատրեան ի Մարսէյլ նուիրեց «Հայաստանի Զաւակների Միութեան» 3 ֆրանք։ Նոյնպէս Մեծ. Գ. Ց. Գալուքեան նուիրեց 2 ֆրանք։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐ

Ա.հաւասիկ Գ. Ժ. Գրատարի խօսած ճառի համառօտութիւնը Փարիզի «Ազգասիրական ընկերութեան» որ տիին մէջ ուր 600 ի չափ ունկնդիրներ կային։ Գ. Ժան Գրատար, հայ ուսանող, կոկուն խօսիլ հատարակութեան ներգաշնակութիւնը խնդրելով իր անփորձ երիտասարդութեան և ֆրանսերէն լեզուին անտեղեակ լինելուն համար և կը ճառէ Հայկական պատմութեանը վրայ զոր ազգային ուսանգութիւնները կը հասցնեն մինչեւ 2350 տարի առաջ քան զԿրիստոս։ Ձիշդ վաւերագիրներ և սեպագեղ արձանագիրներ կը հաստատեն որ Հայաստան աշխարհի ամենահին երկիրներէ մին է։ Աֆրի ամենազօրաւոր և ամենաարդիւնաբեր երկիրներէ մին լինելէ յետոյ, Հայաստան՝ որի դաշնակցութիւնը և միջամտութիւնը յաճախ կը փնտռուէր Պրիամոսի, Նաբուգոդոնոսորի, և այլոնի պէս մեծ աշխարհակալներէ, այսօր երեք հարիւր տարի բաժնուած է Ռուսիայի, Թիւրքիայի և Պարսկաստանի միջեւ։ Մինչեւ դարի մէջ մեծ օգնութիւններ բրաւ խաչակիրներին և մարգկութեան ու քաղաքակրթութեան անհուն ծառայութիւններ մատուց։ Հայաստանի վերջին թագաւոր Լեւոնեան Լեւոն Ե. կիպրոսի Ֆրանսայի Լեւոնեաններուն բնտանիքէն, այսօր կը հանգչի Սէն-Ծընեի պերճանքին մէջ։ Նա եկած էր Ֆրանսա օգնութիւն խնդրելու Ֆրանսայի թագաւոր Կարլոս Զէն, եգիպտացի Արաբներին դէմ որ յարձակած էին իր երկիր։

Խօսելով Հայաստանի կարեւորութեան վրայ, Գ. Գրատարի կըսէ որ նա կը սիրէ Միջերկրականի բոլոր եզերքներին և բոլոր Ափհաին և ցամաքէն կ՚իյնէ Սուէզի ջրանցքին և Հնդկաց ճանապարհին։ Տրապիզոնէն և Ալեքսանդրէթէն կանցնի Պաբսկաստանի և Ափհայի վաճառականութիւնը։

Դիւրքի տեսակէտով, Գ. Գրատարի ատած է որ Հայաստան գերազանց հանգամանքներ ներկայող մի երկիր է. անդ կը գտնուին միանգամայն Ալպեան գաւառներէն և Ս. լերեցոյ գօտիներէն բոլորը, տաքութեան և ցրտութեան ծայրայեղութիւնները, տատիկ մի ձմեռ — 25 տաճիճէի երկրաւժի մէջ և —33 տաճիճանի Եփեսոսի մէջ և տնտանելի մի ամառ + 44 տաճիճան երկրաւժի մէջ և 40էն 45 տաճիճան Երեւանի մէջ, Մինչդեռ Տրապիզոնի մէջ յուլար —6 տաճիճանէն վար չիջնար, Սեւ ծովի գոգաւորութիւնը չթողուր որ ամառնային տաքութիւնը + 25 տաճիճան անցնի։ Որովհետեւ իր հովիտներ գծուած են զանազան ուղղութեամբ մեծամեծ լեռներով, ինչպէս են Եփրատ, Տիգրիս, Արաքս, Կուր, Հալիս, որ ամէն տեղերէն ծնունդ կառնեն, Հայաստան անհամեմատելի կերպով արդաւանդ է ուր շատ տեղեր տարին երկու անգամ հունձ կառնեն և նպարեղէնները շատ տարի ունին։ Դիւրին հաղորդակցութեանդի պատճառով, որովհետեւ երկաթուղի չկայ և բոլոր փոխադրութիւնները կարաւանով կը կատարուին, առատ տարիներէ մէջ բնակիչները կը տանջուին լքանել հունձի մէկ մասը։

Վաճառականական տեսակէտով, բանաքաոր գովեր է Հայաստանի արմտիքները որ մեծ քանակութեամբ կարտադրուին այն տեղ, տատարներ որոնք պակաս կը հայհոյեն քան Փոքր Ասիոյ, Կ. Պոլսոյ և նոյն իսկ Եգիպտոսի։ Ա.յս գարի սկիզբ ծագեր 1,300,000 ոչխար կը հաշուէր իրաքանչիւր տարի Հայաստանէն Կ. Պոլիս տարուածները։ Բուրդեր և կաշիներ Մարսէյլի հետ մի մեծ վաճառականութեան նիւթերն են։ Հայաստանի հողը, մանաւանդ Գարատաղիները, պատուական մի պեղէ են և արտաքսան ձիերէն վար չեն ճար։ Ա.յն տեղ կարտադրուի նաեւ տատոտ գինի։ Սրեւանի գինին նարնջագոյն, քաղցր և անուշահոտ է և Սպանիոյ, Հունգարիոյ և Պուրգոնդի ընտրեալ գինիներուն հետ տար հմտութիւն։ Վանի և Մուշի գինիները նոյնպէս պատուական են։ Հայաստանի մէջ կը գտնուին բազմաթիւ ծծատար (քիմիկ) ընկուզեղինիներ, ամեն տեսակ հանքեր և այլն և այլն։ Թուքատի պղինձները և Զէյմանի երկաթը նշանաւոր են։ Ընդ կը գիտեն Հայաստանի հուչակաւոր ատրանը, բամբակը և մետաքսը։ Հայաստանի ածխի մասը, թէեւ տարին է էնկիւրիի տեսակէն, գտնելով մեծ գործունէութիւն ունի։ Մէտրոնի մէջ բրինձ կը գիտեն։ Նոյնպէս մեծ վաճառականութիւն կը լինի սեզանի աղի, ծովային աղի, ապառ ձուկերի, հայկի վրայ։

Գալով ընտանեկան տնտեսութիւններին և բարքերին, անոնք նահապետական են։ Բազմաթիւ ընտանիքներ միեւնոյն յարկի տակ բնակելոյթիւնը Հայկական ցեղի յատկանիշներէ մին է։ Բ.ըլլալ իր «Տիեզերական աշխարհագրութեան» մէջ, կըսէ որ կարելի է առանց մեծ չափազանցութեան ընել Հայ գիւղացիներուն համար Տաւրնիֆորի բրած դատողութիւնը թէ «Հայեր աշխարհի ամենաշատ և ամենատաքսիմ ժողովուրդն են»։ Իսկ Պալրնի դատողութիւնը թէ «Հայի տատիկներ թէ նախնիներն իրն են. իսկ մտքներն ուրիշներէ եկած են իրեն»։

Հայը հոգեպարծ և խաչնարած է դիւղերին մէջ, բայց երկրագործական գործիքներ զոր կը գործածեն տակաւին, բոլորովին նահապետական են, նոյն իսկ Ռուսիոյ միացած գաւառներին մէջ։ Վաճառական է քաղաքներին մէջ, օժտուած նշանաւոր խելքով։ Նա մեծ դիւրութիւն ունի ուսանելու ամեն օտար լեզուներ։ Նա ամրողջ Ասիոյ առեւտուրը կընէ աբեւմուտքի և արեւելքի բոլոր վաճառականական քաղաքներին հետ։ Լոնտոնի, Բարիզի, Վիէննայի, Հնդկաստանի և նոյն իսկ Ամերիկայի մէջ հայեր կը գտնուին։ Ըստ Լօրէնց Բիկլէրի, Հայը Արեւելքի ամենաչխատասէրը, ամենահանճարեղ և ամենակրթուած ցեղն է։ Նա անուանի եղած է նաեւ իր դիւանագիտական և գիւտնագիտական հանճարով. Նուպար փաշա, Լօրիս Մելիքոֆ և Մելքոմ խան կատարած են պատմական դերեր։

Փարիզն ալ Հայերին կը պարտի իր ամենէն աւելի յառաջատած դատարանի տեղերի առաջին հիմնարկութիւնը։ Փարիզի առաջին սրճարանը 1672ին բացած է Յարութիւն անուն մի հայ և երկրորդը Սահիան անուն մի հայ։

Վերջացնելով, Գ. Գրատարի կը խնդրէ իր ունկնդիրներէն հետաքրքրութիւն ցոյց տալ Հայաստանի և Հայերու վրայ, ուսումնասիրել անոր պատմութիւն, անոր ճոխ գրականութիւն և աշխատիլ անդ ներմուծել արդի քաղաքակրթութեան բարիքները։

Ա.յս տեղեկութիւններուն հետ ցոյց տրուեցան Տրապիզոնի, Էրզրումի, Վանի քարաժայռին, Անիի տեսարժանիներին, վերջապէս հայկական տեղերի և տարազներուն պատկերները։

Գ. Գրատարի բանախօսութիւնը ուշադրութեան ծափահարութիւններով սրժանացած է։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԳԻՍՑ ՅՈՒՍԱՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻՍ.

Սուչաւա, 3 մարտ 1887

Փետր. 12/24 ին, Ս. Վարդանանց ատեն օրը, «Անի» ընկերութիւնը պարտք համարեցաւ քաջ զօրապետին և իր ընկերներուն Հայոց ազգի համար սրած պատերազմի տարեդարձը տօնել, պատրաստեց հանդիսաւոր ազգային պարահանդէս մը Հայոց վարժարանին մէջ։ Պարահանդէսի սենեակին մէջ գաջն Վարդան զօրապետի պատկերը զարդարված էր վառնչ պատկերով, և իվերայ պատկերին եռագոյն գրուած մէկ կող ուր նախ կը տեսնուէր մեծ գրերով Սէր և Միութիւն և յետոյ քանի մը տող մաղթանք Հայաստանի համար։

Գաղափար Ս. ազգերէց Գեր. Տէր Ղեւոնդ քահանան մի տեսնախօսութիւն բրաւ որ տեւեց աւելի մէկ ժամէն։ Խօսեցաւ քաջ զօրապետին և իր ընկերներուն պատմութեանը վրայ։ Ապրնեց «Անի» ընկերութիւնը որ նոր հագի և նոր մարմին առած է ի յիշատակ մեր Անի մայրաքաղաքին։

Ա.յս պարահանդէսին մէջ օրիորդաց ձեռաց գործերուն վիճակահանութիւն մ՚ալ եղաւ, Հայոց վարժարանի անկարող աշակերտաց հանդերձներ չինելու համար, և բաւական մեծ դումար մը ժողովեցաւ։

Ձգմարիտը խօսելով, և ոչ թէ պարծանօք, կրնամ ասել որ շատեր կարող են օրինակ առնել մեր Սուչաւայի Հայերէն միաբանութեան, սիրոյ և գիտութեան համար։ Ամեն տարի հնար կը գտնվի կարօտեալի մը օգնելու, ազքատ աղջիկներ կարդելու և այլն։ Գիտնալու է թէ Սուչաւայի Հայոց գլխին պատկ են Մեծ. Տէրոք Ա.ստղատուր Բրունզուլեանները որոնք բոլոր ազգին համար հոգատարութիւն կանեն և միւս Սուչաւացիներն ալ ոչնչ որ կարող են, միաբանութեամբ հօգնեն անոնց։ Ուրեմն կեցցեն Աստղատուր Բրունզուլեանները բոլոր Հայոց ազգին համար և կեցցեն բոլոր ազգասէր Հայերն։

Փետր. 14/26 ին Տեառնպատաչքի օրը Գեր. Աստղերէց և խաչակիր քահանայ Տէր. Ղեւոնդ Բարսղիչի 25 տարուան քահանայութեան յոբելեանի հանդիսին, Սուչաւայի ազգային հոգաբարձութիւնը մի ալբոմ նուիրեց Տէր Հօր որուն մէջ գրուած էր չնորհաւորութիւնը ստորագրեալ բոլոր Հոգաբարձութեան անդամներէն, և կեղեցականներէ և բոլոր ժողովրդեան

Ա՛վ ես դու, ողորմելի՛ կին, որ մերթ խուճապելով կը փախչիս և մերթ ծունկերդ կիջեալով կը տապալիս ի գետին. Հերովդէսի դահիճներ զքեզ կը վարեն. ո՛հ, երկունքդ աւ երկիւղին հասեր զքեզ ըմբռներ է, որպէս համար անցար մահ մեկուսի ցորենաբոյս արտին մէջ. դու ինքնին անդայեակ ծնար, դաշտի կակուղ խոտերէն խանձարուր չինեցիր, փախուցիր մանկիկդ. չդիտեմ թէ բերկրեցա՞ր երբ անցաւ երկունքդ և ողջամբ ծնար։

Իրիկուն էր, զո տխուր սև արտին հետ մութ գիշերն եւս եկաւ զքեզ պատեց, այլ եւս ապահով եղար թէ զո վարիչ որսորդներն անցան, աւերը նորածին մանուկդ, գնացիր մօտակայ գիւղ, մանկիկդ կը լար, կաթ կը խնդրէր, և դու՝ հա՛ց կը խնդրէիր, դի քաղցն նուազելով կաթդ ցամքեր էր։ Ձդիտեմ, գժբա՛ղդ կին, թէ այնուհետեւ ազատեցա՞ր բաղձներու ճանկէն։

Անշուշտ կողաս, կի՛ն դու, թէ թշուառ եմ, որդի ծնայ, այլ ամուսինս կորսուի. բայց դու զքեզ բաղդաւոր համարէ, կի՛ն, որ վերահաս անձկութեանդ մէջ կարացիր ողջամբ ծնանել և մանուկդ ազատել։ Քան զքեզ անբախտ եղան այն մայրեր որ մայրենի գրկերէն մանուկները ձգեցին ու փախան, որպէս զի գէթ ազատեն իրենց անձն չարաչուք ջրդաց լլկանքներէն։

Ողորմի զքեզ, մանո՛ւկ մայրակորոյս. կասեն թէ քո մայրը մինչ ի փախուստ կը խուճապէր՝ մոռցաւ մայրական սրտի գորովը, ձգեց թողուց զքեզ մի վարած արտի ակօսին մէջ. թերեւս հաւատաց Ջրբխտոսի խօսքին և ասաց թէ՝ մանկիկս իբրեւ ցորենահատիկ մի ցանեմ հայրենի հողին մէջ, թող մեռնի որ բերքնաւորի հասիկս բազմապատիկ ատոք ցորենով։ Եւ ի՞նչ է այդ. — Հայոց աշխարհի Ազատութիւնն։

(Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ

57 րդ թուին մէջ «Հայգոյժ»ի 5րդ սեպտեմբեր 7 րդ տողի «յաղթականն» բառը պիտի լինի «գաղթականն»։

խօսելով Հայաստանի կարեւորութեան վրայ, Գ. Գրատարի կըսէ որ նա կը սիրէ Միջերկրականի բոլոր եզերքներին և բոլոր Ափհաին և ցամաքէն կ՚իյնէ Սուէզի ջրանցքին և Հնդկաց ճանապարհին։ Տրապիզոնէն և Ալեքսանդրէթէն կանցնի Պաբսկաստանի և Ափհայի վաճառականութիւնը։

Դիւրքի տեսակէտով, Գ. Գրատարի ատած է որ Հայաստան գերազանց հանգամանքներ ներկայող մի երկիր է. անդ կը գտնուին միանգամայն Ալպեան գաւառներէն և Ս. լերեցոյ գօտիներէն բոլորը, տաքութեան և ցրտութեան ծայրայեղութիւնները, տատիկ մի ձմեռ — 25 տաճիճէի երկրաւժի մէջ և —33 տաճիճանի Եփեսոսի մէջ և տնտանելի մի ամառ + 44 տաճիճան երկրաւժի մէջ և 40էն 45 տաճիճան Երեւանի մէջ, Մինչդեռ Տրապիզոնի մէջ յուլար —6 տաճիճանէն վար չիջնար, Սեւ ծովի գոգաւորութիւնը չթողուր որ ամառնային տաքութիւնը + 25 տաճիճան անցնի։ Որովհետեւ իր հովիտներ գծուած են զանազան ուղղութեամբ մեծամեծ լեռներով, ինչպէս են Եփրատ, Տիգրիս, Արաքս, Կուր, Հալիս, որ ամէն տեղերէն ծնունդ կառնեն, Հայաստան անհամեմատելի կերպով արդաւանդ է ուր շատ տեղեր տարին երկու անգամ հունձ կառնեն և նպարեղէնները շատ տարի ունին։ Դիւրին հաղորդակցութեանդի պատճառով, որովհետեւ երկաթուղի չկայ և բոլոր փոխադրութիւնները կարաւանով կը կատարուին, առատ տարիներէ մէջ բնակիչները կը տանջուին լքանել հունձի մէկ մասը։

Վաճառականական տեսակէտով, բանաքաոր գովեր է Հայաստանի արմտիքները որ մեծ քանակութեամբ կարտադրուին այն տեղ, տատարներ որոնք պակաս կը հայհոյեն քան Փոքր Ասիոյ, Կ. Պոլսոյ և նոյն իսկ Եգիպտոսի։ Ա.յս գարի սկիզբ ծագեր 1,300,000 ոչխար կը հաշուէր իրաքանչիւր տարի Հայաստանէն Կ. Պոլիս տարուածները։ Բուրդեր և կաշիներ Մարսէյլի հետ մի մեծ վաճառականութեան նիւթերն են։ Հայաստանի հողը, մանաւանդ Գարատաղիները, պատուական մի պեղէ են և արտաքսան ձիերէն վար չեն ճար։ Ա.յն տեղ կարտադրուի նաեւ տատոտ գինի։ Սրեւանի գինին նարնջագոյն, քաղցր և անուշահոտ է և Սպանիոյ, Հունգարիոյ և Պուրգոնդի ընտրեալ գինիներուն հետ տար հմտութիւն։ Վանի և Մուշի գինիները նոյնպէս պատուական են։ Հայաստանի մէջ կը գտնուին բազմաթիւ ծծատար (քիմիկ) ընկուզեղինիներ, ամեն տեսակ հանքեր և այլն և այլն։ Թուքատի պղինձները և Զէյմանի երկաթը նշանաւոր են։ Ընդ կը գիտեն Հայաստանի հուչակաւոր ատրանը, բամբակը և մետաքսը։ Հայաստանի ածխի մասը, թէեւ տարին է էնկիւրիի տեսակէն, գտնելով մեծ գործունէութիւն ունի։ Մէտրոնի մէջ բրինձ կը գիտեն։ Նոյնպէս մեծ վաճառականութիւն կը լինի սեզանի աղի, ծովային աղի, ապառ ձուկերի, հայկի վրայ։

Գալով ընտանեկան տնտեսութիւններին և բարքերին, անոնք նահապետական են։ Բազմաթիւ ընտանիքներ միեւնոյն յարկի տակ բնակելոյթիւնը Հայկական ցեղի յատկանիշներէ մին է։ Բ.ըլլալ իր «Տիեզերական աշխարհագրութեան» մէջ, կըսէ որ կարելի է առանց մեծ չափազանցութեան ընել Հայ գիւղացիներուն համար Տաւրնիֆորի բրած դատողութիւնը թէ «Հայեր աշխարհի ամենաշատ և ամենատաքսիմ ժողովուրդն են»։ Իսկ Պալրնի դատողութիւնը թէ «Հայի տատիկներ թէ նախնիներն իրն են. իսկ մտքներն ուրիշներէ եկած են իրեն»։

Հայը հոգեպարծ և խաչնարած է դիւղերին մէջ, բայց երկրագործական գործիքներ զոր կը գործածեն տակաւին, բոլորովին նահապետական են, նոյն իսկ Ռուսիոյ միացած գաւառներին մէջ։ Վաճառական է քաղաքներին մէջ, օժտուած նշանաւոր խելքով։ Նա մեծ դիւրութիւն ունի ուսանելու ամեն օտար լեզուներ։ Նա ամրողջ Ասիոյ առեւտուրը կընէ աբեւմուտքի և արեւելքի բոլոր վաճառականական քաղաքներին հետ։ Լոնտոնի, Բարիզի, Վիէննայի, Հնդկաստանի և նոյն իսկ Ամերիկայի մէջ հայեր կը գտնուին։ Ըստ Լօրէնց Բիկլէրի, Հայը Արեւելքի ամենաչխատասէրը, ամենահանճարեղ և ամենակրթուած ցեղն է։ Նա անուանի եղած է նաեւ իր դիւանագիտական և գիւտնագիտական հանճարով. Նուպար փաշա, Լօրիս Մելիքոֆ և Մելքոմ խան կատարած են պատմական դերեր։

Փարիզն ալ Հայերին կը պարտի իր ամենէն աւելի յառաջատած դատարանի տեղերի առաջին հիմնարկութիւնը։ Փարիզի առաջին սրճարանը 1672ին բացած է Յարութիւն անուն մի հայ և երկրորդը Սահիան անուն մի հայ։

Վերջացնելով, Գ. Գրատարի կը խնդրէ իր ունկնդիրներէն հետաքրքրութիւն ցոյց տալ Հայաստանի և Հայերու վրայ, ուսումնասիրել անոր պատմութիւն, անոր ճոխ գրականութիւն և աշխատիլ անդ ներմուծել արդի քաղաքակրթութեան բարիքները։

Ա.յս տեղեկութիւններուն հետ ցոյց տրուեցան Տրապիզոնի, Էրզրումի, Վանի քարաժայռին, Անիի տեսարժանիներին, վերջապէս հայկական տեղերի և տարազներուն պատկերները։

Գ. Գրատարի բանախօսութիւնը ուշադրութեան ծափահարութիւններով սրժանացած է։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԳԻՍՑ ՅՈՒՍԱՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻՍ.

Սուչաւա, 3 մարտ 1887

Փետր. 12/24 ին, Ս. Վարդանանց ատեն օրը, «Անի» ընկերութիւնը պարտք համարեցաւ քաջ զօրապետին և իր ընկերներուն Հայոց ազգի համար սրած պատերազմի տարեդարձը տօնել, պատրաստեց հանդիսաւոր ազգային պարահանդէս մը Հայոց վարժարանին մէջ։ Պարահանդէսի սենեակին մէջ գաջն Վարդան զօրապետի պատկերը զարդարված էր վառնչ պատկերով, և իվերայ պատկերին եռագոյն գրուած մէկ կող ուր նախ կը տեսնուէր մեծ գրերով Սէր և Միութիւն և յետոյ քանի մը տող մաղթանք Հայաստանի համար։

Գաղափար Ս. ազգերէց Գեր. Տէր Ղեւոնդ քահանան մի տեսնախօսութիւն բրաւ որ տեւեց աւելի մէկ ժամէն։ Խօսեցաւ քաջ զօրապետին և իր ընկերներուն պատմութեանը վրայ։ Ապրնեց «Անի» ընկերութիւնը որ նոր հագի և նոր մարմին առած է ի յիշատակ մեր Անի մայրաքաղաքին։

Ա.յս պարահանդէսին մէջ օրիորդաց ձեռաց գործերուն վիճակահանութիւն մ՚ալ եղաւ, Հայոց վարժարանի անկարող աշակերտաց հանդերձներ չինելու համար, և բաւական մեծ դումար մը ժողովեցաւ։

Ձգմարիտը խօսելով, և ոչ թէ պարծանօք, կրնամ ասել որ շատեր կարող են օրինակ առնել մեր Սուչաւայի Հայերէն միաբանութեան, սիրոյ և գիտութեան համար։ Ամեն տարի հնար կը գտնվի կարօտեալի մը օգնելու, ազքատ աղջիկներ կարդելու և այլն։ Գիտնալու է թէ Սուչաւայի Հայոց գլխին պատկ են Մեծ. Տէրոք Ա.ստղատուր Բրունզուլեանները որոնք բոլոր ազգին համար հոգատարութիւն կանեն և միւս Սուչաւացիներն ալ ոչնչ որ կարող են, միաբանութեամբ հօգնեն անոնց։ Ուրեմն կեցցեն Աստղատուր Բրունզուլեանները բոլոր Հայոց ազգին համար և կեցցեն բոլոր ազգասէր Հայերն։

Փետր. 14/26 ին Տեառնպատաչքի օրը Գեր. Աստղերէց և խաչակիր քահանայ Տէր. Ղեւոնդ Բարսղիչի 25 տարուան քահանայութեան յոբելեանի հանդիսին, Սուչաւայի ազգային հոգաբարձութիւնը մի ալբոմ նուիրեց Տէր Հօր որուն մէջ գրուած էր չնորհաւորութիւնը ստորագրեալ բոլոր Հոգաբարձութեան անդամներէն, և կեղեցականներէ և բոլոր ժողովրդեան

կոչմանէ։ Ապր. Հոգաբարձութեան Նախագահն Մեծ. Աղա Մ՛իքայէլ Աս. պետ Բրուսոլեան բոլոր ժողովրդեան հետ չնորհաւորեց Գեր. Տ. Հօր յօբէլեանը որի համար Գեր. Տ. Հայրն ալ չնորհակալութիւն մատոյց պատուելի Նախագահին և բոլոր ժողովրդեան, օրհնելով և մաղթելով Աստուծմէ որ Ամենակարողն արժանացուցանէ յիսուներորդ տարեդարձի օրին որ նոյն բոլոր միաբանեալ ժողովուրդը կարողանայ օրհնել և հովանալ։

ԳՐԻԳՈՐ ԼԱԶԱՐՈՎԻՉ

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Գահիրէ 14/26 փետր. 1887

Վերջին եգիպտոս գանուած ժամանակս եւրոպական մի քանի թերթեր գրած էին, վասպուրական երկրի Հայ ժողովրդեան տարաբախտ ու կարեկցութեան արժանի վիճակը, և կարդացի արտասուքով երեք երիտասարդաց աքսորանքի։ Ոչ՛ի սրտիկս ճմլեցաւ. այլ ուրախ եմ միշտ լսելով հինաւուրց այն խրոխտ որ իմ աքսորանաց մէջ իմ բարեկամներն կը խօսէին ինձ ըսելով. «Ծղրայը Թուրան, աքսորի անունը թէեւ խիստ է, բայց վերջը ազատութիւն կայ» Ա՛յ՛, ես իրաւ փորձառու գիտեմ, և հաւատի եմ որ իմ ազնիւ հայրենակիցք եւս պիտի ազատուին։ Մի՛ յուսիք, ա՛վ Հայեր, որ մեր երիտասարդներ աքսորանաց կը գտատպարտուին. մի՛ ոպրաք, եթէ աքսորման արժանի և կախազանի վճիռ անգամ կը տրուի ձեզ, վասն զի, այն ամենէ վերջ, մեր յոյսեր պիտի իրականանան։ Աքսոր ու կախազան փրկեցին Պուկարիան, փրկեցին ազգէր որոնք Հայոց բազդակից էին բայց ոչ Հայոց պէս երկչոտ, ոչ Հայոց պէս աքսորանքէ քաշուողներ։ Կը յիշեմ այնպիսի նպատակաւոր պարագաներ հաստատելու համար իմ կարծիք որ երբէք չեմ վարանիր անանք ի գիր առնել, եթէ ուրին «Արմէնիա» կարգացող բարեկամներս։ Իմ ծերութիւն երբէք չը կրնար ինձ պատճառ տալ որ պէտք եղած իրազութիւնք պահեմ ազգիս։ Փորձով չատ բան տեսած եմ, գրածով ալ նպատակս իրագործել միշտ չանացած եմ։ Վասն այսու ազնուական հիւսիսի կողմ ուղեւորողներ չատ ապէկ կրնան գիտնալ որ չատ տնտուկ գիրք մի ունի։ Թէեւ երկրագործական տնտեսութիւն չունիմ, այլ ժամանակին իմ տնտուկ վայրերն էին։ այն տահմանի վրայ էր որ 25 տարուան մէճիտով կարողացայ Խոշափայ Փիլտա գլխաւորէն Պարթկատոնայի եղբօք հայոց կեանքը, տասցուած քը և 11 տարու վայելչագեղ Մարգարիտ անունով օրիորդն ազատել, որոնք վարագ եկեր էին և իրենց Մարաբոս որդին այն տեղ գալոց դնելէն վերջ, իրենց հայրենիք ի Խոյ կերթային։ Ծիշտս հայերու անուններն են մեծ եղբայր Գրիգոր, փոքր եղբայր Զաքար և Գրիգորի մեծ որդին Ղարիպճան։ Ոչ՛ի կը վարանիմ որ նոյն երեք հայեր ողջ եղած լինէին, և այս առիթը կարգալով դիտնային որ իրենց անձնանօթ նպատակը, 40 տարու հեռատեսութեան ծանը, այսօր գերեզմանի ի գարշապար Եւրոպայի, Ափրիկէի մէջ կը լսէ իւր հայրենակցաց դառն վիճակը։ Ո՛վ Հայեր, ձեզի եւ երեւակայութիւն թող չտամարուի որ Հայերս բանի մը տեր կրնանք լինել։ Մի՛ հաւատաք որ պիտի կրնանք մեր նպատակին հասնիլ առանց աքսորի, բանտարկութեան, տառապանքի, չարչարանքի։ Առանք մարդս առելի փորձառու կանեն։ Օրինակի համար, տպատամբ մը երբ կը ձերբակալուի և բանտի մը խորշին մէջ հառաչձնտայ, կը սկսի իւր անցելոյն փորձով ապագայ ընելիք խորհիլ, և երբ կազատի, բանտի մէջի ծրագիրներ կը սկսի դործադրել, և երբէք ետ չմնար պետք եղածն կատարելու։

Ասկէ չատ առաջ գրած եմ գրածս ան հրաժեշտ պետքին վրայ։ Անշուշտ եմ որ չատ մը տեղերէն կրկին գրած են նոյնը, տակտն հրատարակեալ կը համարյնեմ, մինչ 88 թուականին Հայ գաղթականութիւնները կարօղ են առնուազն 100,000 ոսկի ունենալ, որն որ 16 տարի վերջ ընել է։ Ատոր պատասխան հրատարակեալ կարող են ծերունի Թորոսին խօսիլ. որ ես ալ իրենց ամենապատանի ծրագիրը մը ներկայեմ, որոյ գործադրութեան եղանակները պետք եղած բացատրութեամբ կատամ, և անշուշտ պիտի կարողանամ հաստիլ ամեն անոնց որոնք կը կարծեն թէ գրամ ալ ինչ կընէ. իսկ եթէ գրամ չունիմ, փրկութիւն չունիմ։ Եւրոպայի տասչ մեր լաց ու ազդակները վերջէն կատարեցուցին որ Հօր կատած քը միշտ գրատուած լինի օտարէն և ինքն գերի լինի։ Ա՛չ դժատք, բատական է որ մեր թերատուութիւն մեր աչքով տեսնք տեսնեմ վերջ՝ ուրիշներն ալ պատմող լինին. եթէ չեմ պատիր, կընամ ըսել որ առիթ վերջ կը ծնայ մեզ մեր բազդինատալ մեր տալերով. Երտանիներ եթէ ուղէք գիտնալ, հարցուցէք, մեր կողմէն կը բացատրուին այն ամեն մանր կէտեր որ գեռ եւս և ոչ մեկ Հայոց մտքէն կանցնին։

ԱՂՏԱՇԵՒ ԹՈՐՈՍ

ՌՈՒՍԱՀԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐՆ ԷՐԶՐՈՒՄԻ ՄԷՋ

Փետր. 21/5 մարտի «Մասիս»ի խմբագրական յօդուածին (Մեր արդար բողոքը)՝ մէջ կը կարդանք հետեւեալ կարեւոր և ուշադրաւ լուրը.

«Ռուսք մեծ վանք մը կը հիմնեն ի Կարին։ Այնքան ալ գիտենք Այնօղլի վանքերու պատմութիւնն։ Այդ վանքերէն Գանդելէ յմոն ամենահոչակ վանքն Ռուսաց է։ այժմ Ռուս կառավարութիւնն ի Կարին կը դրկէ Գանդելէ յմոն վանքի վարդապետներէ մի քանին, որպէս զի նահանգիս վանք մը հիմնեն անդ և աշխատին Թուրքիոյ քրիստոնէից առնացման։ Մենք տեսանք մեր աչօքն որ Ռուսք կը վինուէին հայ երիտասարդներ, որք առուսերէն և հայերէն գիտեան, միանգամայն լաւ ճանչնան Թուրքիոյ հայոց բարքերն ու սովորութիւնները։ Այդ երիտասարդք իրր Թարգման Կարին պիտի երթան՝ Գանդելէ յմոնեան վարդապետաց հետ անդ առուս էջմիածին մը պատրաստելու։»

«ԱՐՄԷՆԻԱ»ԻՆ ՆՊԱՍՏ

Շնորհակալութեամբ ստացանք Դամբճեճէն «Արմէնիա»ին նպաստով ընկերութենէն 6 րուբլի մատր և ապրիլ ամիսների համար։

— Շնորհակալութեամբ ստացանք Պաքրճլի «Հայրենասիրաց» ընկերութենէն իւր տարեկան 120 ֆրանք նպաստի երկրորդ վճռամասին 60 ֆր.։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգէն առաս հայրենասէրների մի խումբ պատրաստ մի թուղթ ղրկած է զօրավար Պուլանժէին։ Թուղթին մէկ բերանին վրայ ֆրանսերէն գրատած է ստպէս. «Մ՛ով կերցէ.— Ֆրանսա և Պուլանժէ»։ Միւս բերանին վրայ ռուսերէն գրատած է. «Համարձակի՛ր. Աստուած կը պաշտպանէ համարձակներըը»։ Կառանին (garde) վրայ ալ գրատած է. «Ժմենէն արժանապատուին. — Փետր. 1887. — Ռուսիան։ Թուղթը խտպատի թուղթին չափ ունի. պատճառը զարդարատած է արարական ոճով ոսկեզօծն և արծաթիզէն քանդակներով. դօտին արծաթով քանուած չատ թանկագին չափայէ է։

—Հաւանին կը հետադրեն թէ Ռուսիան փափաք յայտնած լինելով որ միջազգային հսկողութեան տակ մի քննութիւն բացուի Պուլկարիոյ դէպքերուն և սպանների գլխատութիւններուն վրայ, Իտալիան կառավարութիւնը պատասխանած է թէ ինք ալ կը մասնակցի եթէ խնամախտութիւնը ուզէ այդ քննութիւն։

— Խօսք կայ թէ եւրոպական մի վեհաժողով պիտի գումարուի Պուլկարական խնդրին համար։ Կարելի է այդ. բայց որ անհատնական կը թըւի, այդ լուրի հետ կը յարեն նաեւ թէ Գիամարք իշխան մոտգիը է Պարին առաջարկել նախագահել այդ վեհաժողովի ուր եւրոպական առիւծ ձեացած բոլոր խնդիրներն պիտի լուծուին և այնուհետեւ ալ քնդհանուր դէնրնկերութիւն պիտի լինի եղեր։

— Սօֆիան կը հետադրեն երեկ թէ Գ. Զանքօֆ Բ. Դրան մի յիշատակագիր մատուցած է որով կը մերժէ չարունակել բանակցութիւններն, յայտարարելով թէ կարգապահութիւնը վերահաստատելու միակ միջոցն իւր կարծիքով այն է որ Թուրքիան զին. ուորական ուժով գրաւէ Գուլկարիան։

—Պետերբուրգէն տրուած մի ծանկագիր հետադիր կիմացունէ թէ պայթուիկ նիւթեր կրող վեց անձեր ձերբակալուած են այն ճանապարհի վրայ ուրկէ Զարը պիտի անցնէր, երթալ ներկայ պտնուելու համար իւր հօր Ալեքսանդր Բի տխուր մահի տարեդարձը տօնելու հանդէսին։ Գերլինէն կը հետադրեն «Թայմզ»ի թէ տատիկանութիւնը ոչնչահաններուն մի գաւադրութիւնը դտած է որոնց ծրագիրն էր Զարը սպաննել։ Վիէննայէն ալ կը հետադրեն «Թայմզ»ին թէ ոչնչականները մատ չունէին այդ գաւադրութեան մէջ, այլ մեծ մատամբ բարձր պաշտօնների աչերէք և մեծ կալուածատէրներէ մի դաւադրութիւն կազմուած է եղեր որոնց բանն ծրագիրն ոչ թէ Զարը սպաննել է եղեր, այլ զինք ետղը ձգել որ կամ հրաժարական և կամ Սահմանադրութիւնը հրատարակէ։ Ատոնց մէջէն չատը ձերբակալուած են, բայց գործը մեծ դժուարութեամբ գաղտնի պահուած լինելով, մանրամասնութիւնները չեն իմացուած։ Զարը իւր ընտանիքով գնացած է Կաչինայի պալատը ուր աւելի ապահով կը համարի զինք։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՏ 8 ԷՆ 15

ՆԵՐԱՍՈՒԹԻՒՆ

Բիւրդ չարքաւա գործերը 1800 հակի չափ է, որոյմէ 950 հակը Թուքատանի սպրանք զանազան գներով. 100 հակ Ռուսաստոյ առաջինը 150 և երկրորդը 115 ֆր. 200 հակ երկրորդ կարգաւ Կիւրճիւ գառան տեառակները 140–145 և ոչխարի սպիտակները 132 ½ գառնատրները 120 ֆր. 30 հակ Սելանիկ Քատապազարի 125–130 ֆր. 20 հակ Հալէպի լուացուած 220 ֆր. 100 քիլօն։

ԲԱՄԲԱԿ խիստ Թոյլ և անպտղաւթեան մէջ է։

ՄՆԱՏՈՒՍՆԵՂԷՆ վաճառուեցաւ 54 հակ զանազան մեատքո, 800 քիլօ Սիրիոյ կոկոն, 6000 քիլօ Պարսկատանի Քրիլեան։

ԿԱՆԵՓ ըստ տեսակին 57էն 64 ֆր. 100 քիլօն։

ՅՈՐԵՆ հրատարակը գործունեայ է, ըստ տեսակին 15 էն մինչեւ 21 ֆր. գներով կարեւոր գործեր եղած են։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs) նկոզները կը վաճառուին 12½–12¾ ֆր. գներով։

ԼՈՒԲԻԱ անչափ դրամթեան մէջ է. Ռումանիոյ սպրանքները 13 ½ — 14 ֆր. Տրապիզոնի մաքրուած տեսակները 20–21 և Օրատու 18 ½ — 19 ֆր. 100 քիլօն։

ԹՈՋՆԱԿՆԵՐ (alpiste) 27–27 ½ ֆր. փոքր գործեր կըլլան։

ՇՈՒՇՄԱ (sésames) ապրանք չգտա-
լան գործողութիւն ալ չկայ։

ԽԱՇԽԱՇ (pavots) 25 ½–26 ֆրանք 100 քիլօն։

ԿՏԱԻՀԱՏ 25 ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ չկոտրածը 39–40, և կոտրածը 92 ֆր. 100 քիլօն, բայց գործ չըլլար։

ԴԵՂՆԱՀԱՏ 120–150 ֆր. 100 քիլօն։

ԱՑԻ ՄՈՐՔ 15–27 ֆր. տուլփնան։

ԱՐՏԱՑՈՒԹԻՒՆ

ՇԱՓԱՐ 41–41 ½ ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ 76էն 87 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ ճերմակները 3,10 –3,35 և սևերը 3,30 — 4,75 ֆրանք քիլօն։

ՊՂՊՂ 85էն 96 ֆր. 50 քիլօն։

Ծան. — Ֆրանսայի երեսփոխանական ժողովը քուէարկեց մաքսային յաւելումներ ցորենի համար 2 ֆր. և վարսակի համար 1 1/2 ֆր. հետեւաբար այժմ ցորենի մաքսը 5 ֆր. և վարսակինը 3 ֆր. եղած է 100 քիլօին։

Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

De l'Ê (É)
ou
Du positif de l'Etre
qui est l'objet
de la science positive

De l'unité des lettres ou principe de la voix et de son harmonie absolue qui constituent l'objet des sciences logique musique et mathématique

par
le DOCTEUR S. TAVITIAN
prix 3 francs
Paris - 1887

—

pour le recevoir franco, il faut adresser un mandat-poste de 3 francs à la redaction du journal "Arménia,,

Հեղինակը Տօքթոր Սաւիան էֆֆենտի Դաւիթեան կը ջանայ այս հրատարակութիւնով ցոյց տալ ընդհանուր մարդկային լեզուների մէջ եղած բացարձակ ներդաշնակութիւնը և միանգամայն հայերէն տառերի հնչումներին կատարած գլխաւոր դերը այդ ձայնական միութեան մէջ։ Տետրակը նուիրուած է ապրակոալ Սերովբէ էֆֆենտի Կիւլպէնկեանի յիշատակին և իւր եղբայր Սարգիս էֆֆենտին։ Կը ծախուի 3 ֆր.ի։

LA TRIBUNE DES PEUPLES

Revue internationale du mouvement social dans les cinq parties du monde.

Rédaction et administration : Librairie des Deux Mondes, Paris, 17, rue de Loos,

Abonnement France : Un an 5 fr., Union postale, 6 fr.

Sommaire du n° 8, Novembre-Décembre :

Des principaux facteurs de la rénovation humaine. — CASSIUS. *Persécutions et aggravations des troubles en Arménie.* — UN ARMÉNIEN. *Lettre du Paraguay.* — J.-B. TRUQUEN. *De la décadence de la vue chez les peuples civilisés.* — Dr ROSELLI. *L'anniversaire de la mort de Louis Riel au Canada.* — C. DUMONT. *La question ouvrière en Saxe.* — KARL WEBER. *Letlre des Etats-Unis.* — F. TUFFERD. *Mouvement international. Europe :* Bulgarie, France, Grèce, Portugal, Roumanie, Serbie. — *Asie :* Japon. — *Afrique :* Maroc. — *Amérique du Nord :* Antilles. — *Amérique du Sud.* — Brésil, Chili, Pérou, Uruguay. — *Océanie :* Australie, Ile, Timor.

Revue bibliographique internationale.

Un numéro de cette revue est envoyé à titre d'envoi, *gratis* et *franco*, à tous ceux de nos lecteurs qui en feront la demande à la Librairie des Deux Mondes, Paris, 17, rue de Loos, avec le Bulletin donnant l'analyse des publications en vente à cette librairie.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՅԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ » 20 »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԵԼԻ » 40 »

Կը ծախուին Պարսկայ, «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Փոստ քաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Թրանսատլանտիկան, բրբական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրութեան։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱՅԻ
ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. գրբ. հրատարկր. ընկերքէ.»

==

Մեծանուն բանաստեղծ Գամառ–Քաթիպայի (Ռ. Պատկանեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Գամառ–Քաթիպայի բանաստեղծութիւնները մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, ա-ւելորդ կը համարինք գրել այդ մասին։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի գին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մտքերնիս դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքովը հանդերձ։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. Փ. ԱՋԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

(Ադամեան)

1887 տարուան Ընդարձակ Օրացոյցն հրատարակուեցաւ նախորդ տարիներէն չատ աւելի ճոխ։

Բովանդակութիւն

Բացի բուն Օրացոյցէն կը պարունակէ հետեւեալ վիճակագրական բնոյթ գիտելիքները. Օսմանեան կայսրութիւն, — Աւստրիոյ կայսերական պալատան, —Նախարարք Բ. Դրան, —Մեծ պաշտօնատարք Մայրաքաղաքին, —Հրամանատարք բանակաց, —Կուսակալք նահանգաց, — Գատաւորք քաղաքաց և սղդ–գործք, —Օժանդեան դեսպանք, —Դեսպանք օտար տէրութեանց, — Վիճակագրութիւն Օսմ. կառավարութեան, — Հայոց պատիճանատուրք և պաշտօնեայք Օսմ. տէրութեան, — «Հայրապետութիւն Հայոց», —Եպիսկոպոսունք, — Պղտ. Կեդրոնական Վարչութիւն, — Ծանձ-նաժողովք, —Պաշտօնեայք Պատրիարքարանի,–Առաջնորդութիւնք Թուրքիոյ, թեմք նոցա և տունք, —Հովուութիւնք, — Մայրավանք Թուրքիոյ, —Թաղօրայք Կ. Պոլսոյ, —Համագումար Թաղօրէից, — Բարեգործական և կրթական հաստատութիւնք, —Առաջնորդութիւնք ի Ռուսաստան և այլն,–Մայրավանք ի Ռուսաստան և այլն, – Կայսերական դերդաստան Ռուսիոյ, —Հայազգի ստացուածքք և պաշտօնեայք Ռուսաստան, Պարսկաստան և այլևայլ տէրութեանց,–Հռոմէական Հայ հաստատութիւն,–Բազմական Հայ հաստատութիւն, — Դաստուածք պետական ուսումնարանք, —Բժիշկք քաղաքական և զինուորական, – Փաստաբանք, – Աբուեստագէտք, – Լրագիրք,–Հեռագրութիւնք Թուրքիոյ և միջազգային,–Եւրոպական միջազգային թղթատարութիւնք,–Եւրոպական նամակատունք,–Յամաքային թղթատարութիւն Ասիական Թուրքիոյ,–Ժամացոյց սուրհանդակաց Օսմ. միջազգային թղթատարութեան,–Յուցակք երթեւեկութեանց չոգենաւուց այլևայլ ընկերութեանց,–Պատկեր 1887 թուին, – Վիճակագրութիւնք օտար տէրութեանց, – Ադգ.ք,–Մանուցմունք։

Ներկայ տարւոյ Ընդարձակ Օրացոյցի ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրացած է։

Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը։ Գինը 75 սանթիմ փոստի ծախքը կը վճարէ խմբագրատունը։

Պարզ ՕՐԱՑՈՑՑը որի մէջ կայ Վեհ. Մակար Կաթողիկոսի պատկերը, կը ղրկուի փոստով 30 սանթիմի փոխարէն։

ՐԱՖՖԻ ԳՈՐԾԵՐԸ

ԿԱՅԾԵՐ

ՀԱՏՈՐ Ա

Ազգային վիպագիրը Պրն. Րաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐը։ Ա յս գիրք կը ծանօթացնէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւնները կուտայ քաւդեների պատմական ցեղերի և հայերի դրացնեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով մէկ իրր ազգային ընտիր վիպասանութիւն և մէկ իրր հայրենասիրական գործունեութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տունն։

***

ՋԱԼԱԼԷԴԴԻՆ

1877ի ռուս–թիւրքական պատերազմի ժամանակ Եէյխ Ջալալէդդինի արշաւանքին պատճառով Տաճկաստանի հայերի կրած ազէտներէ մէկ ազէտարշ նկարագրութիւն է։ Գրքին սկիզբը կայ հեղինակին, Պ. Րաֆֆիի պատկերը։

***

Վերոյիշեալ երկու գիրքերը կը ծախուին «Արմենիա» լրագրի խմբագրատունը. ԿԱՅԾԵՐը Հատոր Ա. 6 ֆր. և 50 սանթիմ։ «Ջալալէդդին»ը, 2 ֆրանգ և 30 սանթիմ. Մտքերնիս դուրս ամեն տեղի համար փոստի ծախքովը հանդերձ՝ ԿԱՅԾԵՐ Հատոր Ա. 7 ֆրանգ. «Ջալալէդդին» 2 ֆր. և 50 սանթիմ։

Յ. Հ. ԿՐԻԴ ԵՒ ԸՆԿ.

Գտուածքօր Ն. Ռ. Բ. Անգլ. Հնդկաստան

—

Ներածող և արտածող վաճառականք, յանձնակատար, ապրդ-ախօսութեան յանձնակատար, մեծ քանակութեամբ ապրանքների պայմանագիր (քօնթրաթճի) և ամեն տեսակ կալիի գործարանատէր։

Վերոյիշեալ գանազան ճիւղերին մէջ երկար ժամանակէ փորձառութիւն ունենալով, պատրաստ ենք յանձնարարութեամբ ընդունել վաճառքներ, պայմանաւոր վաճառման կամ հրապարակային աճուրդի համար, այնպիսի պայմաններով որ փոխադարձաբար շահաբեր և գոհացուցիչ լինին։

Եւրոպական վաճառքների փոխանակութեամբ մենք կրնանք գրկել ինչ քանակութեամբ ալ որ ուզուին, Հնդկաստանի մէջ գործուած ապրանքներ, առաջին կարգի ընտիր տեսակներէ, ինչպէս

Լաքնահօդաց մանկական խաղալիկներ, բնարէնի արոյր և ասկեճամուկ չուխա, Մօրադաբադայ արոյրեայ առնօթներ, Տէհլու ասկեայ և արծաթեայ գոհարեղէններ, կաշմիրայ շալեր, ֆերպաններ, եւն։

Ընդարձակ տեղեր ունենալով յանձնարարուած ապրանքները ցոյցի դնելու և ծախելու համար, մենք կարող ենք ամենայն վստահութեամբ յանձնարարել մեր տունը ամեն անոնց որ կուզեն գործով յարաբերութեան մտնել մեզ հետ և մենք չատ ուրախ պիտի լինինք եթէ տեղեկութիւն, ներ և օրինակցուներ ընդունինք այդ նպատակով։

Մեր տան մասին տեղեկութիւն առնելու ուզողները կարող են դիմել հետեւեալ դրամատուներին.

BANK OF BENGAL
ROHILCUND ET KUMAON BANK
AGRA BANK LIMITED

Եթէ պէտք լինի, պատրաստ ենք ուրիշ տեղեր ալ ցոյց տալ տեղեկութիւնների (références) համար։

Ոևէ բան մեզ հաղորդելու համար պէտք է ուղղակի դրել մեզ անգլիերէն կամ հայերէն լեզուով և մանրամասնօրէն, առաջարկուած գործին վերաբերեալ պայմաններն և գները ներկայացնելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեան
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 56.